



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.05.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԳԲԽ-27/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ՍՑ-ԳԲԽ-27/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2017թ. թիվ 03/73-3/5207-17, 29.03.2017թ. թիվ 04/73-3/5569-17, 30.03.2017թ. թիվ 04/73-3/5602-17 և 04.04.2017թ. թիվ 03/73-3/5906-17 գրություններով ներկայացված «Լեդ մարկետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01273872) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-27/17 բողոք), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի 15.03.2017թ. թիվ 08/18/1953-17 և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի 09.03.2017թ. թիվ 01-ՄՄ-12/114, Երևանի քաղաքապետարանի 20.03.2017թ. թիվ 01/61-4890 և 01/61-4891 գրությունների հիման վրա, 24.03.2017թ. թիվ 03/73-3/5207-17, 29.03.2017թ. թիվ 04/73-3/5569-17, 30.03.2017թ. թիվ 04/73-3/5602-17 և 04.04.2017թ. թիվ 03/73-3/5906-17 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Լեդ մարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2 «Լեդ մարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 15.03.2017թ. 17:25-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Կենտրոն) թեժ գծին և հայտնել, որ մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի կողմից Էլեկտրական սարքավորումների ձեռքբերման համար 03.03.2017թ-ին հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին:

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Լեդ մարկետ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 03.03.2017թ-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Ահազանգողը Կենտրոնին խնդրել էր կատարել կրկնակի հարցում ՀՀ ԿԱ ՊԵԿ, որի արդյունքում կպարզվի, որ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Կենտրոնը 21.03.2017թ. թիվ 02/04.1/1049-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ խնդրելով հայտնել՝ «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ-ին (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, թե ոչ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված 30.03.2017թ. թիվ 1/6-1/10628-17 գրության համաձայն՝ **«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ-ի դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

3. ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ քննչական կոմիտեն 15.03.2017թ. թիվ 08/18/1953-17 գրությամբ ներկայացրել է «ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

4.«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն 09.03.2017թ. թիվ 01-ՄՄ-12/114 գրությունով ներկայացրել է «ԷԷՀՕ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/08-17» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

5 Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 20.03.2017թ. թիվ 01/61-4890 և 01/61-4891 գրություններով ներկայացրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

6 ՍՅ-ԳԲԽ-27/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՅ-ԳԲԽ-27/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՔԿԴ-17/1» և «Էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԷԷՀՕ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/08-17» ծածկագրերով ընթացակարգ

- «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ. և 23.02.2017թ. մասնակցել է համապատասխանաբար՝ ՀՀ քննչական կոմիտեի և «Էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՔԿԴ-17/1» և «ԷԷՀՕ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/08-17» ծածկագրերով գնման ընթացակարգերին:
- Պատվիրատուները՝ 06.03.2017թ. և 02.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Լեդ մարկետ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ, համապատասխանաբար՝ 23.02.2017թ. և 03.03.2017թ.-ներին:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 10.03.2017թ. և 07.03.2017թ. Պատվիրատուներին տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, համապատասխանաբար՝ **19346 ՀՀ դրամի և 19117 ՀՀ դրամի** չափով:
- «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 15.03.2017թ. 17:25-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Կենտրոն) թեժ գծին և խնդրել կատարել կրկնակի հարցում ՀՀ ԿԱ ՊԵԿ, որի արդյունքում կպարզվի, որ ՀՀ քննչական կոմիտեի կողմից «ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 03.03.2017թ., Ընկերությունը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:
- Կենտրոնը 21.03.2017թ. թիվ 02/04.1/1049-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ խնդրելով հայտնել «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ.-ին (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված 30.03.2017թ. թիվ 1/6-1/10628-17 գրության համաձայն՝ **«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ.-ների դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով ընթացակարգ

- «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ. և 01.03.2017թ. մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով գնման ընթացակարգերին:
- Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով 14.03.2017թ. և 15.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 15.03.2017թ. և 17.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով գնման ընթացակարգերին **հայտ ներկայացնելուն նախորդող երեք հաշվեպուրարիների համախառն եկամուտի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:**
- «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները, համապատասխանաբար՝ 16.03.2017թ. արձանագրություն թիվ 4 և 17.03.2017թ. արձանագրություն թիվ 4 որոշել է մերժել Ընկերության հայտերը:

7 Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 67-րդ կետի համաձայն «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվեքույր փարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

1. ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՔԿԴ-17/1»

ծածկագրով ընթացակարգ

«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ. մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին:

Պատվիրատուն՝ 06.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Լեդ մարկետ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 03.03.2017թ-ին ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 10.03.2017թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **19346 ՀՀ դրամ:**

«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 15.03.2017թ. 17:25-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Կենտրոն) թեժ գծին և խնդրել կատարել կրկնակի հարցում ՀՀ ԿԱ ՊԵԿ, որի արդյունքում կպարզվի, որ ՀՀ քննչական կոմիտեի կողմից «ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 03.03.2017թ., Ընկերությունը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Կենտրոնը 21.03.2017թ. թիվ 02/04.1/1049-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ խնդրելով հայտնել՝ «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ-ին (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրած 30.03.2017թ. թիվ 1/6-1/10628-17 գրության համաձայն՝ **«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ-ի դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

Վերոհիշյալից երևում է, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրած 30.03.2017թ. թիվ 1/6-1/10628-17 գրության՝ «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ-ի դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

2 «Էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԷԷՀՕ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/08-17» ծածկագրով ընթացակարգ

«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 23.02.2017թ. մասնակցել է «Էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԷԷՀՕ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/08-17» ծածկագրով գնման ընթացակարգին:

Պատվիրատուն՝ 02.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Լեդ մարկետ» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 23.02.2017թ. ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 07.03.2017թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **19117 ՀՀ դրամ:**

Վերոհիշյալից երևում է, որ Ընկերության կողմից 23.02.2017թ. «ԷԷՀՕ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/08-17» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացրած հայտարարության հավելված 2-ը, որով հայտնել և հավաստել է, որ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ հանդիսանում են Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում **կեղծ տվյալի** ներկայացում:

3 Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/89» և

«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով ընթացակարգ

«Լեդ մարկետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ. և 01.03.2017թ. մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով գնման ընթացակարգերին:

Ընկերությունը «ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՔԿԴ-17/1» և «ԷԷՀՕ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/08-17» ծածկագրերով գնման ընթացակարգերին մասնակցության հայտերի N 3.4 հավելվածով՝ հայտնել և հավաստել է, որ **երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:**

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով 14.03.2017թ. և 15.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 15.03.2017թ և 17.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Լեդ մարկետ» ՍՊԸ-ն «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով գնման ընթացակարգերին **հայտ ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:**

«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/89» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/82» ծածկագրերով գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները, համապատասխանաբար՝ 16.03.2017թ. արձանագրություն թիվ 4 և 17.03.2017թ. արձանագրություն թիվ 4 որոշել է մերժել Ընկերության հայտերը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Լեդ մարկետ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Լեդ մարկետ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը:

Մասնավորապես, «Լեդ մարկետ» ՍՊԸ-ի կողմից 23.02.2017թ. թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում և միևնույն ժամանակ առկա է առաջին խախտումը թույլ տալուց հետո մասնակցի կողմից 03.03.2017թ. և 01.03.2017թ.-ներին ներկայացված հայտ, որի շրջանակներում մասնակցի կողմից նույնպես թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտումներ:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով***, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը՝ կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե ***Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող***:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2017թ. թիվ 03/73-3/5207-17, 29.03.2017թ. թիվ 04/73-3/5569-17, 30.03.2017թ. թիվ 04/73-3/5602-17 և 04.04.2017թ. թիվ 03/73-3/5906-17 գրություններով ներկայացված «Լեդ մարկետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01273872) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Լեդ մարկետ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Լուսինե Ոսկանյան

Անդամ՝



Հայկ Կոշեցյան